ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ ԶՈՀՎԱԾ 24 ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՂԵՐԱԿԱՆ և ՏԽՈՒՐ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Բեյրութում ապրիլի 1-ին պատահեց ավտոմեքենայի մի սրտաճմլիկ և եղերական դեպք, որին զոհ գնացին Բեյրութի Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի ուսուցիչներից և աշակերտներից 24 երիտասարդ և խոստումնալից կյանքեր։

Շշմեցնող դեպքը խորունկ վիշտ պատճառեց Ամենայն Հայոց Հայրապետի սրտին, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ծեմարանի ուսանողության։

Ապրիլ 7 թվակիր հեռագրով, Վեհափառ Հայրապետը, ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի միջոցով, հետևյալ ցավակցական հեռագիրը ուղղեց Բեյրութ՝ հանձնելու համար Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի տնօրինության.

«Մեծ վիշտ կպատճառե Մեզ վարժարանիդ 24 աշակերտներու մահվան աղիտալի գույժը։ Դառնորեն կողբանք կորուստը անոնց մատաղ կյանքերուն և կաղոթենք Փրկչի Իշման Սեղանի առաջ անոնց արդար հոգիներուն համար և հոգվո մխիթարություն կնայցենք հարազատներուն։

Ձեզ և բոլորիդ ասվածային ողորմություն և օրհնություն»։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ապրիլի 24-ին, Մայր Տաճարում, հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ ապրիլյան նոր զոհերի խնկելի հիշատակին։

13 մայիս թվակիր նամակով, Բեյրութի Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարանի տնօրեն պր. Հակոբ Պուճիգանյանը գրում էր Վեհափառ Հայրապետին հետևյալը.

«Վեհափառ Տե՛ր.

Վարժարանիս պաշտոնեության և աշակերտության, զայն հովանավորող եկեղեցվո և ժողովուրդին և ապրիլ 1-ի աղետյալներու ծնողներուն և լիբանանահայության համար մխիթարության իրական աղբյուր մը եղավ Ձեր ցավակցական հեռագիրը։ Որքա՜ն սփոփիչ էր մեզ համար գիտնալ, թե մեր պատվական Հայրապետին սիրտը կբաբախե ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր հայերուն համար անխտիր և թե Ձեր այնքան այլազան ու ծանր զբաղումներուն մեջ չեք մոռնար հեռավոր անկյան մը մեջ կսկծացող սրտերուն ցավը ամոքել։

Դժբախտաբար չենք կրնար անձամբ գալ ու մեր սրտագին շնորհակալությունները ծնկաչոք մատուցանել Ձերդ Վեհափառության և Ձեր հայրական օրհնությունները հայցել։ Սակայն միշտ երախտագետ սիրտ մը կպահենք Ձեզի հանդեպ ու հիացմունքով կհետևիք Ձեր բոլոր բարի, շինարար և խաղաղասիրական ջանքերուն։

Մեր ջերմագին մաղթանքն է, որ Տերը Ձեզի պարգևե երկար տարիներ, որպեսզի կարենաք հետզհետե մեր ազգային և եկեղեցական բոլոր տարակարծությունները փարատել ու Հայ Եկեղեցին պայծառացնել»։